


ՂԱՐԱԲԱՂԻ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՆ

Ա Ռ Ի Թ Ո Վ



Ազգերու ինֆնորմացիոն իրաւունքի խորհրդային սահմանադրութեան տրամադրութիւններուն վրայ խարսխուած եւ պատմական անարդարութեան մը սրբագրումը յառաջագրող հայկական համաժողովրդային պահանջատիրութեան ի պատասխան, հորհրդային Միութեան Գերագոյն հորհուրդի Յուլիս 18ի անարդար եւ մերժելի որոշումը անկիւնադարձային նոր հանգրբումնի մը առջեւ կը դնէ համայն հայութիւնը, Ստեփանակերտէն մինչեւ Երեւան ու Պաֆուէն մինչեւ սփիւռքի ամենահեռաւոր անկիւնը: Միաժամանակ, ան կը խախտէ մեր ժողովուրդին հաւատքը հանդէպ հորհրդային Միութեան մէջ ծաւալող ռամկավարացումի եւ ընկերային-տնտեսական բարեկարգչական շարժումին, զոր խանդավառօրէն դիմաւորած էր ամբողջ հայ ժողովուրդը:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնս վերահաստատելով իր դիրքը եւ հետեւողականօրէն շարունակելով իր զօրակցութիւնը հանդէպ Լեռնային Ղարաբաղի ինֆնավար Մարզի ազգաբնակչութեան արդար պահանջներուն, միաժամանակ խոր անձկութեամբ կը հետեւի Գերագոյն հորհուրդի վերոյիշեալ որոշումին յաջորդած՝ զարգացումներուն եւ համաժողովրդային յուսախարութեան ու դառնութեան: Եւ այսօր, ներկայ հանգրբումնին, Կուսակցութիւնս մեր ժողովուրդի բոլոր հատուածներէն կը պահանջէ իրապաշտ մօտեցումով առաւելագոյն զգաստութիւն եւ շրջահայեցութիւն, Մայր Հայրենիքի մէջ պետական իշխանութեանց հետ ժողովրդային միաձայն գործակցութեամբ մեր պահանջատիրութիւնը տեղադրելու քաղաքական-դիւանագիտական գետնի վրայ, եւ տնտեսական թէ ալ կառոյցներու բնականոնացումով ու վերականգնումով ստեղծելու այն հզօր պատուանդանը, որ կարենայ երաշխաւորել իրագործումը մեր ձրգտումներուն եւ պահանջներուն:

Միւս կողմէ, առաջնորդուած մեր ժողովուրդին փիզիքական գոյութեան եւ գերագոյն շահերու պաշտպանութեան հիմնական հրամայականէն, հորհրդային Կեդրոնական Իշխանութենէն կը պահանջենք՝

Ա.- վերատեսուութիւնը Գերագոյն հորհուրդի Յուլիս 18ի որոշումին եւ Լեռնային Ղարաբաղի ինֆնավար Մարզ անունով ծանօթ պատմական Արցախի կցումը հորհրդային Հայաստանին՝ ընդառաջելով ԼՂԻՄԻ խորհրդարանին ու անոր ձայնակցող համայն հայութեան պահանջին:

Բ.- հստիւ դատապարտումը Սումկայիթի մէջ տեղական կուսակցական թէ քաղաքական իշխանութեանց մեղսակցութեամբ հայերու դէմ գործուած թրքաբարոյ խժոժութեանց խստագոյն պատժամիջոցներու կիրարկումը պատասխանատուներու դէմ. կարիսարգիւումը նմանօրինակ ամէն փորձի՝ անմիջականօրէն ապազինելով ատրպէյխանցի զինեալ տարրերը:

Գ.- Հետեւողական կիրարկումը ընկերային, տնտեսական եւ մշակութային այն բարեփոխումներուն, զորս Գերագոյն հորհուրդը որոշած էր իրագործել իր 26 Մարտի նիստին ընթացքին եւ զոր վերահաստատել էր իր Յուլիս 18ի նիստին:

Մենք խորապէս համոզուած ենք թէ բնականոն կեանքի վերադարձով Մայր Հայրենիքի մէջ եւ վերանշեալ պահանջներուն բաւարարումով պիտի ապահովուի արդար եւ առողջ հիմերու վրայ ազգերու եղբայրակցութեան սկզբունքին կենսագործումը հորհրդային բազմազգ Միութեան մէջ: